ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԻ ԵՎ ՀԳՄՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախապատրաստվել և անցկացվել են մարզի խորհրդի 4 հերթական նիստեր, որոնցում քննարկվել են համայնքների 2014 թվականի բյուջեների սեփական եկամուտների կատարման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, ոռոգման համակարգերի նախապատրաստության, համայնքներում գնումների կազմակերպման գործընթացի, հուշարձանների պահպանության վիճակի ու առկա խնդիրների, գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման ուղղությամբ տարվող աշխատանքների, <<Արփի լիճ>> ազգային պարկի տնտեսական ու արգելոցային գոտիներում հողերի վարձակալության գործընթացի կանոնակարգման և այլ հարցեր:

2014 թվականի ընթացքում օրենքով սահմանված կարգով մարզի թվով 19 համայնքներում նախապատրաստվել ու անցկացվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, այդ թվում 11 համայնքներում՝ համայնքների ղեկավարների, 8 համայնքներում՝ ավագանու անդամների: Բավրայի, Ցողամարգի և Ալվարի համայնքներում ընտրվել են համայնքների նոր ղեկավարներ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի, փոխվարչապետի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 159-Ա հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում վարչական հսկողություն իրականացնելու 2014 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն, 2014 թվականին նախատեսված թվով 39 համայնքներից նույնքանում իրականացվել է վարչական հսկողություն: Մարզպետի որոշումներով ստեղծված աշխատանքային խմբերը վարչական հսկողություն իրականացնելիս առաջնորդվել են համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված հսկողության հարցաշարերով: Վարչական հսկողության ընթացքում ուսումնասիրվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների կատարման օրինականությունը՝ քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, արտակարգ իրավիճակների, բնապահպանության, մշակույթի, սոցիալական պաշտպանության, կրթության, առևտրի և ծառայությունների, հողօգտագործման, անասնաբուժության, տրանսպորտի և կապի, ընդերքօգտագործման և այլ բնագավառներում: ՈՒսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ ըստ համայնքների կազմվել են համապատասխան ակտեր, որոնցում նշվել են այն խախտումները, որոնք տեղ են տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման ուղղությամբ: Համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ համայնքների ղեկավարներին համապատասխան գրավոր առաջարկություններ են արվել և սահմանվել են կոնկրետ ժամկետներ հսկողությամբ արձանագրված խախտումները վերացնելու համար: Համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքները քննարկվել են համայնքների ավագանիների նիստերում, արձանագրված խախտումները համայնքների տեղական ինքնակառավարման

մարմինների կողմից ընդունվել են ամբողջությամբ: Վարչական հսկողության արդյունքների և հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ յուրաքանչյուր եռամսյակ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացվել է համապատասխան տեղեկատվություն:

2014 թվականի 11 ամիսների ընթացքում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված ժամկետում ՀՀ Շիրակի մարզպետարանում ստացվել է համայնքների ավագանիների թվով 1268 որոշումներ: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.5 հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան ուսումնասիրվել են մարզպետարան ստացված համայնքների ավագանիների բոլոր որոշումների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: Ուսումնասիրության արդյունքում ՀՀ Շիրակի մարզպետարան ստացված համայնքների ավագանիների թվով 840 որոշումներ համապատասխանել են ՀՀ օրենսդրությանը, իսկ թվով 428 ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմվել են համապատասխան առարկություններ (տեսակարար կշիռը՝ 33.7%) և համապատասխան առաջարկություններով ուղարկվել են համայնքների ղեկավարներին: Մարզպետի կողմից ներկայացված առարկությունները քննարկվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, դրանք ընդունվել են ամբողջությամբ, օրենքով սահմանված կարգով և ժամկետում իրավական ակտերը համապատասխանեցվել են ՀՀ օրենսդրությանը և արդյունքների մասին ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացվել են տեղեկատվություններ: Մարզպետարանի դիրքորոշման հետ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից չհամաձայնվելու դեպքեր չեն արձանագրվել: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում, նախորդ տարիների համեմատությամբ, էականորեն բարելավվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ օրենսդրությանը համապատասխան իրավական ակտերի ընդունման գործընթացը: Մարզի համայնքների ավագանիների որոշումները մարզպետարան ներկայացնելու վերաբերյալ սահմանված կարգով ամենամսյա տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

Ամենօրյա աշխատանք է տարվել համայնքների ղեկավարների աշխատակազմերի կադրային գործի բարելավման և համայնքային ծառայության ներդրման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Մարզի համայնքներում առկա 632 համայնքային ծառայության պաշտոններից զբաղեցված են 518-ը: Թափուր մնացած 114 պաշտոններից 54-ը զբաղեցված է ժամկետային աշխատանքային պայմանագրերով: Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների հայտարարությունները տեղադրվել են <<Ազդարար>>, ՀՀ տարածքային կառավարման նախարարության և մարզպետարանի ինտերնետային կայք էջերում, դրանք փակցվել են նաև համապատասխան համայնքապետարանների տեղեկատվական ցուցատախտակներում: Մարզի 40 համայնքներում նախապատրաստվել և անցկացվել են համայնքային ծառայության թափուր պաշտոնների 89 մրցույթներ, իսկ 115 համայնքներում՝ համայնքային ծառայողների 154 ատեստավորումներ: Մրցույթների ու ատեստավորումների արդյունքները սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

Նախապատրաստվել և անցկացվել է 197 համայնքային ծառայողների հերթական վերապատրաստում, մարզի համայնքներում չվերապատրաստված համայնքային ծառայողներ

չկան: Վերապատրաստվել են նաև համայնքների 27 ղեկավարներ և ավագանու 78 անդամներ: Համայնքներում կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողության շրջանակներում մարզի թվով 8 համայնքապետարանների աշխատակազմերում ուսումնասիրվել են համայնքային ծառայության ներդրման ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքը: Տեղ գտած թերություններն ու բացթողումները վերացնելու նպատակով համայնքների ղեկավարներին և նրանց աշխատակազմերի քարտուղարներին ցույց է տրվել համապատասխան մեթոդական ու խորհրդատվական օգնություն:

Աջակցություն է ցուցաբերվել մարզի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովման աշխատանքներին: Ապահովվել է մարզի համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից ընդունված որոշումների տեղադրումը մարզպետարանի կայքում: Հետևողական աշխատանք է տարվել համայնքների բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները, հաստատված բյուջեն և նրանում կատարվող փոփոխությունները համայնքապետարաններում ցուցատախտակներին և տեսանելի այլ վայրերում փակցնելու, լրատվամիջոցներով հրապարակելու, մարզային կայք էջում տեղադրելու ուղղությամբ, որի վերաբերյալ սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման օրվա կապակցությամբ կայացած մրցանակաբաշխությունում Ախուրյանի համայնքը ճանաչվել է «Լավագույն գյուղական համայնք 2014», Արթիկի համայնքը՝ «Լավագույն մշակութային համայնք 2014», իսկ Գյումրու համայնքը՝ «Տարվա լավագույն համայնքային կայք»:

Աշխատանքներ են տարվել մարզի տարածքով անցնող միջպետական, հանրապետական նշանակության և միջհամայնքային ճանապարհներին հարակից տարածքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքների բնակիչների, մարզային ենթակայության կազմակերպությունների ու ընկերությունների միջոցով համայնքների ճանապարհների, հասարակական կենտրոնների, կրթության, մշակույթի, առողջապահական և այլ կազմակերպությունների ու բնակելի շենքերի տարածքներում կատարվել են աղբահանության, սանիտարական մաքրման, ծառատնկման, կանաչապատման և հնարավոր բարեկարգման աշխատանքներ:

ՀՀ Շիրակի մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից մշակվել և իրականացվում են արտակարգ իրավիճակների կանխարգելման, բնակչության և տարածքների պաշտպանության, զորակոչային և զորահավաքային աշխատանքների իրականացման, պետական սահմանի պահպանության աջակցության հստակ քաղաքականություն:

Մշակված քաղաքականության համաձայն ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության 2014 թվականի տարեկան աշխատանքային ծրագրով նախատեսված գործառույթների, մարզպետի ու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի հանձնարարականների կատարման ուղղությամբ 2014 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք աշխատանքներ:

Վարչությունը համագործակցելով հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ՝ աշխատանքներ է իրականացրել մարզում արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հնարավոր հետևանքների վերացման, զինված ուժերի զորահավաքային նախապատրաստության, զորակոչի իրականացման, պետական սահմանի պահպանության ապահովման ուղղությամբ:

Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ մարզում բնական և տեխնածին աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ պահանջվող միջոցառումների պատշաճ իրականացումն ապահովելու համար:

2014 թվականի ընթացքում մարզային փրկարարական վարչության, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված արտակարգ իրավիճակների կանխարգելմանը, բնակչության և տարածքների պաշտպանությանը: Ուլորտում նախատեսված աշխատանքներն իրականացնելու նպատակով, մարզպետի կողմից ընդունվել են մի շարք որոշումներ:

Կազմվել են ՀՀ Շիրակի մարզպետի 2014 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի զորակոչային տեղամասերին 1998 թվականին ծնված և ավագ տարիքի պատանիների կցագրման աշխատանքների նախապատրաստման և անցկացման մասին» թիվ 8-Ա, փետրվարի 3-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների մասին» թիվ 18-Ա, փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2014 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների մասին» թիվ 26-Ա, փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում շտաբային ուսումնավարժություն անցկացնելու մասին» թիվ 31-Ա, ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում հրամանատարաշտաբային ուսումնավարժություն անցկացնելու մասին» թիվ 78-Ա, մայիսի 13-ի «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 8-ի 256-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 89-Ա, մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2014 թվականի ամառային զորակոչը կազմակերպելու մասին» թիվ 97-Ա, հունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2007 թվականի հունիսի 12-ի թիվ 287 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 117-Ա և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերի կանխարգելման մասին» թիվ 118-Ա, սեպտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն անցկացնելու մասին» թիվ 225-Ա, հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2014 թվականի ձմեռային զորակոչը կազմակերպելու մասին» թիվ 287-Ա, նոյեմբերի 5-ի «2014-2015 թվականների ձմեռային ժամանակահատվածում ընդհանուր օգտագործման միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին բնակչության անվտանգ երթևեկությունն ապահովելու միջոցառումների մասին» թիվ 290-Ա որոշումների

նախագծերը, կազմվել են նաև ՀՀ Շիրակի մարզպետի մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացումներ նախատեսող որոշումների նախագծեր:

Ճշգրտվել, համաձայնեցվել և հաստատվել են մարզի բնակչության պաշտպանության ոլորտին առնչվող՝ «Քաղաքացիական պաշտպանության Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային», «ՈՒժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործողությունների», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի անտառներում հակահրդեհային պահպանության ապահովման միջոցառումների», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2014 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների» և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերի կանխարգելման մասին» պլանները, այդ պլանների իրականացման նպատակով շահագրգիռ մարմինների հետ անցկացվել են խորհրդակցություններ և իրականացվել են դրանցում նախատեսված միջոցառումները:

ՀՀ Շիրակի մարզպետի 2014 թվականի փետրվարի 21-ի թիվ 31-Ա որոշման համաձայն, 2014 թվականի ապրիլի 17-ին Գյումրի քաղաքում անցկացվել է «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաք տարահանված բնակչության ընդունման և տեղաբաշխման կազմակերպումը» թեմայով շտաբային ուսումնավարժություն, իսկ համաձայն ՀՀ Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 16-ի թիվ 78-Ա որոշման՝ մարզի Փանիկ, Նոր Կյանք, Անուշավան համայնքներում հունիսի 19-ից 20-ը անցկացվել է հրամանատարաշտաբային ուսումնավարժություն՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը սելավի դեպքում» թեմայով:

Ապահովվել է ՀՀ Շիրակի մարզի օպերատիվ խմբի մասնակցությունը 2014 թվականի նոյեմբերի 18-ից 19-ը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից անցկացված «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային ընդհանուր վթարի դեպքում արձագանքման կազմակերպումը և իրականացումը» թեմայով հրամանատարաշտաբային ուսումնավարժությանը:

Համաձայն մարզպետի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2014 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերի կանխարգելման մասին», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի անտառներում հակահրդեհային պահպանության ապահովման միջոցառումների» պլանների և որոշումների պահանջների՝ տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները և բնակչությունը ներգրավվել են արտակարգ իրավիճակների կանխարգելման և դրանց հետևանքների նվազեցման ու վերացման աշխատանքներին:

2014 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից կազմակերպական առումով ցուցաբերվել է անհրաժեշտ օժանդակություն՝ 2014 թվականի ուսուցման պլանի համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ակադեմիայում վերապատրաստման դասընթացներում ընդգրկված մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցների և մասնագետների (թվով 49 մարդ) մասնակցությունն ապահովելու ուղղությամբ:

Շարունակվել է համագործակցությունը «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Հայկական Կարմիր Խաչի ընկերության հետ: 2014 թվականին մեկնարկել է Հայկական կարմիր խաչի ընկերության «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի 3-րդ փուլը: Ծրագրում ընդգրկվել են մարզի ևս 4 համայնքներ (Ջաջուռ, Բերդաշեն, Զորաշեն, Շիրակավան) և ընդգրկված համայնքների թիվը հասցվել է 18-ի: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրում ընդգրկված համայնքներում և Հայկական Կարմիր Խաչի ընկերության Գյումրու գրասենյակում անցկացվել են ուսումնավարժություններ, հանդիպումներ, քննարկվել են ծրագրի արդյունավետ իրականացման հարցեր:

2014 թվականի ընթացքում շարունակվել է նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի Շիրակի մարզի Զարգացման ծրագրի կողմից մարզի թվով 24 համայնքներում իրականացվող աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված ծրագիրը, որի շրջանակներում 2014 թվականի մարտի 27-ից 29-ը Աղվերանի «Աղվերան» հյուրանոցում անցկացվել է «Համայնքի կարողությունների և ռիսկերի գնահատման ու աղետների ռիսկերի նվազեցման պլանի մասնակցային մշակման» թեմայով դասընթացը:

Բաժինը կազմակերպչական առումով վերը նշված բոլոր ծրագրերի իրականացմանն իր գործուն աջակցությունն է ցուցաբերել:

ՀՀ-ում աղետների ռիսկի նվազեցման թիրախների և չափորոշիչների մշակման ու հատուկ համակարգող խմբի ձևավորման նպատակով 2014 թվականի հունիսի 25-ից 26-ը Ծաղկաձորի «Ռոսիա» հյուրանոցում ՄԱԶԾ Ճգնաժամի Կանխարգելման և Վերականգնման Բյուրոյի աջակցությամբ անցկացված խորհրդակցական սեմինարին ապահովվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍԳՀ բաժնի աշխատակցի մասնակցությունը: Բաժնի աշխատակիցները մասնակցել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան պաշտպանական համագործակցության գրասենյակի կողմից 2014 թվականի սեպտեմբերի 16-ից-19-ը Երևան քաղաքում անցկացված «Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը, ազգային աջակցության իրականացումը և միջազգային ուժերի հետ համագործակցությունը» թեմայով (Գառնի 2014) աշխատաժողովին և շտաբային ուսումնավարժությանը, որի ընթացքում ներկայացվել է զեկույց ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ընթացքում ՀՀ Շիրակի մարզպետարանի խնդիրների, հնարավորությունների և գործառույթների վերաբերյալ:

ՀՀ Շիրակի մարզի տարածքում նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների կցագրման աշխատանքների, տեղական զորակոչային հանձնաժողովների կազմերի

հաստատման աշխատանքների ապահովման և զորակոչային աշխատանքների պատշաճ կազմակերպման ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ:

Աշխատանքներ են տարվել մարզի համայնքների ղեկավարների հետ՝ 2013 թվականի ձմեռային, 2014 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում տարածքային զինվորական կոմիսարիատներին աջակցություն ցուցաբերելու, զորակոչային տարիքի անձանց հաշվառումը պատշաճ կազմակերպելու, հաշվառումից դուրս մնացած անձանց բացահայտելու և զինվորական կոմիսարիատներին համապատասխան տեղեկատվություն ներկայացնելու ուղղությամբ:

2013 թվականի ձմեռային և 2014 թվականի ամառային զորակոչի առաջադրանքները կատարվել են համապատասխանաբար 106.4% և 101.5%:

2014 թվականի հունիսի 17-ին ՀՀ Շիրակի մարզում անցկացված զորահավաքային նախապատրաստության միջոցառումների ժամանակ ռեսուրսների ծանուցումն ու զորահավաքային պլանի համաձայն զինվորական կոմիսարիատների նախնական հավաքակետեր առաքումն իրականացնելու նպատակով Ախուրյանի, Արթիկի և Անիի զինվորական կոմիսարիատներին ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցություն:

ԼՂՀ ՊԲ և ՀՀ ՊՆ 5-րդ, 3-րդ, 1-ին բանակային կորպուսներիի նախաձեռնությամբ սույն թվականի մարտի 16-ին, հունիսի 21-ին, հոկտեմբերի 14-ին, նոյեմբերի 20-ին Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում ՀՀ Շիրակի մարզից զորակոչված թվով 262 զինծառայողների և նրանց ծնողների հանդիպումն ապահովելու ուղղությամբ իրականացվել են անհրաժեշտ աշխատանքներ:

Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել ՀՀ Շիրակի մարզի սահմանամերձ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ու ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչությունների և սահմանապահ ուժերի միջև համագործակցված աշխատանքների ապահովման ուղղությամբ:

Կազմակերպվել է Գյումրի քաղաքի և ՀՀ Շիրակի մարզի թվով 13 համայնքների վարչական սահմաններում գտնվող՝ Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության կողմից օգտագործվող անշարժ գույքին նոր փոստային հասցեներ տրամադրելու վերաբերյալ համայնքների ղեկավարների որոշումների ընդունման և այդ գույքի սպասարկման համար անհրաժեշտ հողամասերի հատակագծերի հաստատման գործընթացը:

«Վրաստանի և Հայաստանի Հանրապետության սահմանին գտնվող «Բավրա» և «Նինոծմինդա» պետական սահմանի անցման կետերի սահմանների կառավարման կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզի Բավրա համայնքում գտնվող անցակետի համար կառուցապատված 13 կմ երկարությամբ գազատարի հարակից տարածքներում գտնվող Բավրա, Սարագյուղ, Թավշուտ, Սիզավետ, Ղազանչի և Մեծ Սեպասար համայնքների գազիֆիկացման շնորհիվ բնակչության կարիքների մասնակի բավարարման հնարավոր ուղիները պարզելու նպատակով սույն թվականի օգոստոսի 8-ին նշված համայնքներ այցելած ՄԱԶԾ 3 աշխատակիցների՝ համայնքների ղեկավարների ու բնակչության հետ նախատեսված հանդիպումների կազմակերպմանը ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցություն:

Մարզի սահմանամերձ համայնքների ղեկավարներին ցուցաբերվել են համապատասխան աջակցություն՝ սահմանային շերտ մուտքի անցաթղթերի ձեռք բերման համար ներկայացվող փաստաթղթերի կազմման աշխատանքներին:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՏԻ ԵՎ ՀԳՄՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

18.12.2014թ.